**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2**
**ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-20/3** ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Աշոցք 6 փետրվարի 2020թ. ժամը 12:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Գնահատող հանձնաժողովի նախագահ | Ավետիք Ամիրյան |
| Անդամներ | Սրապ Հարությունյան |
| | Պավլիկ Սումբուլյան |
| Գնահատող հանձնաժողովի քարտուղար | Բաբկեն Աբրեյան |

**ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-20/3 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման մասին**

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-20/3 ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող սեղմված բնական գազի նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված, որը կազմում էր 600 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղարը հաղորդեց հանձնաժողովի անդամներին, որ պատվիրատուի կողմից հրավեր ստացած մասնակիցը՝ «Ազգանաս Բերնեցյան» ՍՊԸ-ն (հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Շինարարների 33, էլ. փոստ՝ azganaz@mail.ru) ներկայացրել է հրավերով պահանջվող գնային առաջարկ: Այնուհետև քարտուղարը մասնակցի ներկայացրած գնային առաջարկը հանձնեց հանձնաժողովի նախագահին:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց մասնակցի ներկայացրած գնային առաջարկը՝ մեկ թվով արտահայտված, որը կազմում էր 600 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովը գնահատեց գնային առաջարկի համապատասխանությունը գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին: Անհամապատասխանություններ չարձանագրվեցին:

Հաշվի առնելով գնահատման արդյունքները՝ հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 1

*ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-20/3 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Ազգանաս Բերնեցյան» ՍՊԸ-ին:*

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 2

*Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-20/3 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից «Ազգանաս Բերնեցյան» ՍՊԸ-ի հետ կնքել սեղմված բնական գազի մատակարարման պայմանագիր:*

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 3

*Հասպատել ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-20/3 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:*

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի անգործության ժամկետ չի սահմանվում, և հանձնարարեց քարտուղարին նիստին հաջորդող 4 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակցին ուղարկել ծանուցում՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների ստորագրությունները

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | ______________ | Ավետիք Ամիրյան |
| Հանձնաժողովի անդամներ | ______________ | Սրապ Հարությունյան |
| | ______________ | Պավլիկ Սումբուլյան |
| Հանձնաժողովի քարտուղար | ______________ | Բաբկեն Աբրեյան |